ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 121

07.06.2024թ.

ք. Երևան

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԱՎ ՔՈՄ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 03566648; գործունեության հասցե՝ ՀՀ, Կոտայք Բյուրեղավան 55 27 70) միջև 25.12.2023թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-3/1-9 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ԱՎ ՔՈՄ» ՍՊԸ-ն Պայմանագրի 8.13 կետով սահմանված՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել և ՀՀ պաշտպանության նախարարություն չի ներկայացրել Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող համաձայնագիրը:

Հաշվի առնելով, որ «ԱՎ ՔՈՄ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության պահանջները, որոշում եմ՝ «ԱՎ ՔՈՄ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ